



ՕՐԱԳԻՐ ԶՄԻՌՆԻԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆՍԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ԵՐՐՈՐԻ ՏԱՐԻ

ԶՄԻՌՆԻԱՅ ԸՆԴՈՒՆՈՒՄ 7 ՀՈՎՏԵՄԲԵՐ 1872

ԹԻՒ 946

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Հանդարտութիւնը կը տիրէ ընդհանուր քաղաքականութեան վերայ, որ հիմնեալ կը լինի Լեւոն պիոյ այժմեան երկրական վիճակին և հետեւաբար խաղաղութեան հաստատուն պահուելուն վերայ: Այս մարդասիրական քաղաքականութիւնը՝ որ օգտակար է ըրոր ազգաց համար, և որուն նկատմամբ համաձայն կերևին դրժմէ բոլոր տէրութիւնք և մանաւանդ անցեալները Պէրլինի մէջ խորհրդակցութիւն ընող երեք մեծագոր կայսերք, այս մարդասիրական քաղաքականութիւնը, կը սեմք, ըստ ամենայն երեւանց, երկար ժամանակ պիտի տէ: Սակայն դժբաղդաբար կտաւարութիւնները ըստ մեծի մասին կը խորհին թէ ընդհանուր խաղաղութիւնը ապահովցնելու մի միայն միջոցն՝ իւրաքանչիւր տէրութեան զինուորական զօրութեանց մշտապէս և հաստատուն մնալն է: յորմէ կը հետեւի թէ սպառազինեալ խաղաղութիւն մի պիտի ունենամք: Ստոյգ է թէ անցեալները զրուցուեցաւ թէ Պիզմարք իշխանը միտք ունի առաջարկելու գերմանական բարձրմէնին մէջ, որպէս զի հիւսնանիոյ զինուորական զօրութիւնը նուազեցնեն, եթէ միւս մեծ տէրութիւններն ևս, իրենց կը զմանէ: Նոյն խնայողական գործիւնը ՚ի գործ գնելու հաշանութիւն տան, բայց տակաւին այս լուրը չըստուցուեցաւ: որուն զործադրութիւնը դժուար կերևի մեզ:

Օգտմանալի է ապաքէն որ ներկայ տասնևիններորդ դարու մէջ, որ լուսաւորեալ դար կը համարուի, կը թոնական վեճերն երթալով կը շարունակ և կը տարածուին: Գերմանիոյ մէջ պապական եպիսկոպոսները, այսինքն Պապին անձնական անսխալութեան վարդապետութիւնը ընդունողները՝ հերձուածող կանուանեն և կը ըզրկեն զհին կաթոլիկները՝ այն է Պապին անսխալութիւնը չընդունողները: Իսկ գերմանական կառավարութիւնը առանց իւր թոյլտուութեան եղած այս նշովքը օրինազանցութիւն համարելով, կը պատ-

ԲԱՆՍԱՍԻՐԱԿԱՆՔ

Հետեւեալ տեղեկագիրը՝ որ Գանիքեան Կ. Պօլսոյ ազգային կեդրոնական վարչութեան յուղարկուած է, հարկ կը համարիր Ս. շարաւայ միջոցաւ հրատարակելի տեղեկութիւն ուղչամիտ հասարակութեան: Այս պաշտօնական գրուածոյն վերայ մեր էղբայրակից քաղաքացի ոմանց, այսինքն Մալխոյն, Մանգուալին, և մանաւանդ Փունջիև ծանր ուղղորդութիւնը կը հրապարակուի, որք կողմնապահ աղբիւրներէ քաղելով, ընդդէմ ճշմարտութեան շատ սխալ տեղեկութիւններ հրատարակեցին այս ցաւալի խնդրոյն վրայօր:

Յուսամք թէ Փունջը, որ առանց ստորագրութեան նողկալի պարսաւագիր մի հրատարակած է Եզիպտոսի բարեխնամ Առաջնորդին վերայ, անկողմնապահութեան ստիպեալ կը լինի, պիտի փութայ՝ միեւնոյն անկողմնապահութեան պարտաւորեալ հրատարակելու նախ զյետագայ պաշտօնական տեղեկագիրը ՚ի պատիւ ճշմարտութեան:

ՏԵՂԵԿԱԳԻՐ

Ազգային Քաղաքական ժողովոյն Եզիպտոսի: Աշխարհագրոյ արժանապատիւ տէր Արքայազան քահանայ Աճլմանի միամտեայ բացակայութեան ամբիւրձամասայ կը հարգուի արժամ: Կարապետ վարդապետ Բաղրատունի մինչ ցվերադարձ վերադառնալ քահանային սրուն Կ. Պօլսոյ երթալու արտօնութիւն տրուած է իւր ակարութիւնը բուժելու համար: Տեղադրութեան Բաղրատունի ժողովը յուսալով որ Կարապետ վարդապետը ըստ իւր խնաման, պիտի փութայ որ և է կողմնակցութեան չձառայելով խաղաղութեան առաջնորդել, վստահուող

րաստուի խտաւ գատապարտել և պատժել յիշեալ խտաւայոյզ եպիսկոպոսաց ընկալքը:

Միևնոյն կերպիւ հերձուածող հրատարակեալ և նշովեալ են Արեւելեան կաթոլիկ շայերը, որ կը մերժեն, և շատ իրաւամբ, Պապին անձնական անսխալութեան վարդապետութիւնը և անոր ուրիշ ապօրինաւոր կոնդակները:

Ուրիշ նոր հերձուած մի ևս տեղի ունեցաւ Զուսայ օրթօսօքս եկեղեցւոյն մէջ: Բայց այս հերձուածը ամենևին կը թոնական չէ, ուստի աւելի ճիշտ և օրինաւոր կը համարուի բաժանումն անուանելուցն: Զայտնի է թէ խօսքերնիս Պապի արդայնութեան կը վերաբերի. որ զանազան պատճառայ համար կամեցաւ դատուել Զուսայ եկեղեցիէն և ազգային անկախ եկեղեցի մի կազմել առանց կրօնական փոփոխութիւն մի ընելու: Բայց և այնպէս այս բաժանումը՝ հերձուած հրատարակեցաւ Կ. Պօլսոյ Զուսայ Ս. Սիւսդէն, և բաժանեալ կղերք ու ժողովուրդը հրապարակաւ նշովուեցաւ:

Այս եղբուցութիւնը՝ թէ և կրօնական երեւոյթ ունի, բայց քաղաքականութեան հետ մեծագէտ յարակից ընելով, հեռաւան և խոհեմ կառավարութիւնները կը թոնական զխոց իշխանութիւնը չափաւորելու և կը մեղծեն նոյն կրօնական իշխանութեան միջամտութիւնը ՚ի քաղաքական գործս. վստահել կառավարութեան մը մէջուրիշ կառավարութիւն չկրնար ընել:

Օսմանեան կայսերական կառավարութիւնն ևս, անշուշտ այս սկզբան հետեւելով, պաշտօնական կերպիւ իմաց տուած է զանազան ազգայնութեանց հոգևոր զխոց, որ ամենևին աղբիւրային՝ այսինքն թաղերի չզրեն առ Բարձրագոյն Իրուսն սր և է քաղաքական գործոյ մի համար:

Հետեւեալ յօդուածը՝ զոր Մալխոյ լրագրոյն Սեպտեմբեր 21 թիւէն քաղած եմք, ընդարձակօրէն կը բացատրէ մեր այս զրուցածները:

«Կը յիշեն ընթերցողք որ լրագրոյն 1282 թուով

այս ամիս սահմանադրական օրինաց գործադրութեան համար քուէարկութեան մասին պէտք եղած հրահանգը ևս զրկեց նորին արժանապատուութեան, պատուիրելով նմա՝ անթերի գործադրութիւնը հրահանգի մէջ մի յօդուածոյ:

Կարապետ վարդապետն հնազանդութիւն կ'ուխտէ, ընտրողաց և ընտրելեաց ցանկերը կը պատրաստէ, քուէթղթերը կը շարժէ, և քուէարկութեան օրը կ'որոշէ: Բայց ընտրողաց և ընտրելեաց ցանկերուն դէմ բողոքներ կը լինին, մտիկ չընեն. կեղծութիւն զրկուած հրահանգի յօդուածոց տրամադրութեանց հակառակ կը զործէ, և այս մասին եղած օրինաւոր դիտողութեանց ականջ չկախեր: Ազգիս և տէրութեան առեւանդերէ գատապարտեալ անձ մը ընտրելի կը հրատարակէ և արժանաւոր ընտրելիներ ցանկէն դուրս կարտաքսէ, որովհետեւ կողմնակցութեան մը յարած է:

Տէր Արքայազան քահանայն Պօլսոյն կը վերադառնայ, և Կարապետ վարդապետն կերակոյցի թի իւր առձամանակեայ պաշտօնը քուէարկութեան ետքը պիտի դադարի. վստահող կը փութայ զորս որ կուտակցութիւն մի կազմել, որպէսզի յաջողի Աշխարհագրոյ հին ամբողջ բազմիւր:

Սուրբ Աստուածածնայ վերափոխման օրը՝ տասնչորս կեղեցւոյ աւարտումին պատաւը, քուէտու փին կը ընկնեն, և դեռ օր մը առաջ Պօլսոյն համող անձանութեանց քուէները դիտակցութեամբ կը ընկունի, և անոնց մէջ քաղաքական ժողովոյն սրբազան Կատաղա հին ներկայանալով զարմանօր կը նկարագրէր ապօրինաւոր քուէարկութեան խառնածաղանձ հանդէսը, ինչպէս նաև մի քանի ազգայնոց կողմնէ իրեն տրուած պատրաստ քուէթղթի յակամայից ստիպեալ քուէտուիրն մէջ ձգելը:

(1 Սեպտ. 1872) քանի մի խորհրդածութիւն ըրած է ինք (Ս. Իսնէն մեր Պատրիարքարանի Գաբու-Քէ-հիասիին եղած ազգաբարութեան վերայ թէ՛ այսուհետեւ պատրիարքարանները քաղաքական խնդրոց և գործոց համար թաղերի չզրեն առ Բ. Իրուսն, այլ միայն ազգային-կրօնական խնդրոց համար: Այն խորհրդածութիւնք Բարձրագոյն Իրուսն ուշադրութիւնը գրաւելով, շարաթ օրը Բարձրագոյն Իրուսն կոչուեցանք, և վստահ. Սատուլլահ-Ալէյ մեր ըրած խորհրդածութիւնները Պարնասեան Պօղոս էֆէնտիկ թարգմանել տալէ ետև՝ ազգաբարեց մեզ թէ Բարձրագոյն Իրուսն ըրած տնօրէնութեանց վերայ դիտողութիւն ընելու համար՝ հաստատեալ օրէնքի մի կամ կանոնի մի վերայ պէտք է յեռու: Պատրիարքներուն արտօնութիւնը կրօնական է և ոչ քաղաքական, ըսաւ: Հետեւաբար քաղաքական խնդրոց միջամտելոյ բնաւ իրաւունք կամ արտօնութիւն չունին. իրենց իրաւասութեանէն դուրս է քաղաքական գործերը կառավարութեան միայն կը վերաբերին, և տէրութեան հպատակներն՝ իրենց ազգային-կրօնական գործոց համար պատրիարքարանի, բայց քաղաքական գործոց համար ուղղակի կառավարութեան պէտք է գիմեն: Կատուաց առաջնորդներուն՝ առ պատրիարքարանն ունեցած պատասխանատուութիւնն ալ կրօնական է միայն. քաղաքականապէս կառավարութեան պատասխանատու են՝ և ոչ Պատրիարքարանի:

Վերջագէտ վստահ. Սատուլլահ-Ալէյ խնդրոյն այլևայլ կէտերուն վերայ մեր ըրած դիտողութեան ամենուն մէկէն սա պատասխանը տուաւ թէ. պատրիարքարանաց ժամանակ մ'ի վեր բռնած ընթացքն իրենց իրաւասութեան և արտօնութեան սահմանէն խտրուած մ'է, անկանոնութիւն մ'է, որուն տէրութիւնը մինչև ցարդ ներողամտաբար թոյլտուութիւն ըրած էր, բայց այսուհետև չպիտի ընէ:

Հետեւաբար եթէ մեք և ուրիշ որ և է շայ լրագիր Բ. Իրուսն այս որոշմանը վերայ դարձեալ դիտողութիւն մ'ընենք, լրագիրնիս պիտի գոցուի:

Քուէարկութեան երկրորդ օրը բողոքագրի կը մեղան ՚ի կեղծութիւն, և Կարապետ վարդապետի անվստիւրարքը կը պատմեն, քուէարկութեան ապօրինաւորութիւնը կը մեղադրեն և սահմանադրական օրինաց դէմ տեղի ունեցած նախատիքներուն հատուցում կը պահանջեն: Քաղաքական ժողովն անհամար կապանք քուէարկութեան արդիւնքը օրինաւոր արժանադրութեամբ կարգալ, որպէսզի վերահասու ըլլայ վերադառնալ անցից, և ահա ուրիշ բողոքագրի մի ևս կը ընկնի Կարապետ անղա Յակոբեանի: Կամակալը Կարապետ վարդապետի կողմանէ կառավարութեան տեսնենքու մատնուած ըլլալը յիշելն ետքը նաև պատճառը կը յայտնէ, որ ըզմերոյ իշխանի տուն իւր հրաւիրելով թի իւր և թի իւր բայցակոյ եղբոր թագաւոր աղայի բացարձակ տուակութեամբ թաղական խորհրդոյ անդամ ընտրուելն կը մերժէ, ըսելով թի՛ քանի որ քուէարկութիւնը ապօրինաւոր է և քանի որ սահմանադրական օրէնքը ծաղրել ըսելն անոր տրամադրութեանց դէմ մեղանչելը, կը յարգուի զորէ զԿարապետ վարդապետ որ ապօրինաւոր քուէարկութեան ամբիւրձ տեղի ունեցած դժուրութեանց առաջը տանելու համար ՚ի Գահիրէ կըլ, որպէսզի ժողովուրդը հանգարտի և խտուրթիւնը չընդհանրանայ:

Հուսկ յետոյ Կարապետ վարդապետի մէկ հեռագիրը կը հասնի, որով կ'իմացնէ քուէարկութեան լրացած ըլլալը, եթէ անձանց ընտրութիւնը, խաչատուր Էթիզեանի ընտրողաց և ընտրելեաց ցանկերը պատրած ըլլալը, և Կարապետ աղա Յակոբեանի զինքը ՚ի Գահիրէ կըլիտ ստիպելը. որուն հեռագրով պատասխանեց Քաղաքական ժողովն թի մասնաւոր նամակով իւրեանց քուէարկութեան տեղեկագիրը զրկել, զի ըստ այնմ պարտու պատշաճը տնօրինուի: Եւ որովհետև անպատասխանի միայն սոյն հեռագիրը, ժողովն մասնաւոր նամակ մի

Փարիզի Լաբրի օրագիրը մօտիկ թիվերին մէկ խօսակցութիւնը կը հրատարակէ, զոր բարեկամի մը հետ ըրած է Վաղդիսի այժմեան քաղաքական ընթացքին վրայօք :

Լաբրի կը խօսակցութեան նիւթը քաղաքային մեծ կարեւորութիւն ունեւորւի, արժան կը համարուի անոր քանի մը կտորները մեր ընթերցողաց աչաց ներքեւ դնել :

Կը կրկնուի, ըսեր է մօտիկ թիւեր իւր բարեկամին, թէ կը փափաքիմ եւ կուզեմ հաստատուն պահել զխաղաղութիւնը. եւ տարակցս չունիմ թէ Լաբրիային մէջ իւրաքանչիւր ոք ինձ պէս կը մտածէ :

Լաբրիային չկրնար մոռնալ թէ քան տարի անդադար դէմ դրի այն ձախող քաղաքականութեան, որ այս տէրութեան տկարանալը կուզէր, եւ թէ յանցանքը իմն չէ :

Սուտիոյ բարեկամական զգացումները ծանուցեալ են մեզ : Չգտցանք որոց անկեղծութեանը վերայ տարակցս չունիմ :

Իտալիան մեր թշնամին չէ, չկրնար և չուզեր մեր թշնամին լինել : Եթէ անոր կառավարութեւ մէկ մասին զօրոգութեանէ դուրս, եթէ ընդդէմ իւր վեհազն թագաւորին անձնական զաղաքացի, սխալ կարծիք և գծաւորութեան տարածուցան ազդի մէկ մասին մէջ, այս կարծիքը եւ գծաւորութիւնները չեն կրնար ցաւալի հետեւեալ ունենալ :

Սուտիոյ բարեկամական զգացումները ծանուցեալ են մեզ : Չգտցանք որոց անկեղծութեանը վերայ տարակցս չունիմ :

Գրեց Կարապետ վարդապետի իմացնելով որ քուէարկութեան տեղեկագիրը բարեհաճի անձամբ կեղծութիւններ կայանցնել, որուն օրինակը կամ սպորինակը լինելը քննուելէ ետքը արդիւնքը հրատարակուի : Այս ի պատասխանի սոյն նամակի հազիւ ուրեմն կըստիպուի իմացնել հեռագրով թէ Յակոբեան Կարապետ աղայի հետ դատի բռնուած ըլլալուն համար չկրնար ի Գահիրէ ելնել : Միևնոյն օրը ուրիշ հեռագրով մ'ալ կընդունի ժողովս Կարապետ վարդապետի կուսակցութենէ, որոյ պարունակութիւնն է թէ չպիտի թողուն զԿարապետ վարդապետ որ ի Գահիրէ կ'ըլլէ, ըստորում իրմէ գոհ են եղեր : Երկրորդ օրը հանրագրութիւն մ'ալ հասաւ, որ Էջմիածնէ խաչատուր աղայի համար գաղտնաբար ցանկերը պատճառ ըլլալը յիշուած է : որուն համար Կարապետ վարդապետը իւր հեռագրով զաղտնաբար խօսքը չընէր. եւ իրողութեան կերպարանք կուտայ երեւակայեալ գաղտնի եղելութեան մը :

Կարապետ վարդապետ Օգոստոս 16—28 թուագրեալ նամակի մը և կըզբէ ժողովոյս. որով Կարապետ աղայ Յակոբեանի դէմ կառավարութեան ատենաներու առջև գատ բանալը յիշելն ետքը կը յաւելու թէ իւր ազգը գերութենէ ազատելու համար պարտ ու պատշաճ յատկազոյն պատրաստած է, կրօնականի մը բերնի անվայել հայեցողութիւնները զորս ըրած է իւր յաղթութեան պատի, կըզոյգարանէ, վատ, բարբարոս, կատաղի, գաղան եւ ուրիշ բերան չառնուելու արիւնալից նախատիքներով նամակը կը վերջացնէ, յորդոր կարգալով Բաղաքական ժողովոյս և գերա : Միևնոյն օրը Կարապետ աղայի որ իրեն հետ միանալը եւ Յակոբեանց անունը աշխարհէս անհետացնելը : Վաղաքական ժողովս մեծաւ զարմանումով կարդայ սոյն պարտաւազիրը, և մտածելով որ Կարապետ վարդապետի անդուստը զայրոյթը ուրիշ շատ

ճշմարիտ գեղեցկութեան և ճշմարիտ մեծութեւն գծին մէջ :

Սուտիոյ էթէ մեծ գործունէութեամբ կաշխատիմ զօրաբանակին յառաջագիւղութեան վերայ, քանզի կուզեմ որ Վաղդիան այնպիսի զօրաբանակ մը ունենայ որ գերազանց լինի ուրիշ որեւէ ազգի մը ունեցածէն, եթէ ոչ ըստ քանակութեան, դո՛ւնէ ըստ որակութեան : Երեւակայական կարծեաց մէջ կ'ընայ մարդս երբ քանակութեան վրայօք կը խօսի : Կըսէին թէ Ռուսիացիք 1 1/2 միլիոն զօրք Վաղդիոյ երկիրը թափեցին, մինչդեռ այս թուոյն կէսը միայն ունէին : Քանակութեան վերայ հիմն դնելով մարդս կրնայ սխալել իւր հաշուոյն մէջ, մինչդեռ այս սխալը չպատահիր զինուորաց որակութեանը վերայ վստահ լինելով : Ուստի իբրև որակութիւն (քաղթեթ), Վաղդիոյ այժմեան զօրաբանակը անբաղաւոր է. եւ այս բանը ըսողը և հաստատողը միայն ես չեմ : Իւր գործառնակովը և իւր ազգային առատ եկամուտներովը, զորս յաջող վիճակի մը մէջ դնելու կաշխատիմ, Վաղդիան վստահու բան մի չունի և կրնայ մեծաւ ապահովութեամբ աշխատել իւր առաջին բարձր կացութիւնը ի ձեռն բերել :

ԱԶԳԱՅԻՆ

Ահաւասիկ դամբանական ճառիցն օրինակը՝ գոր Սուրբաբայ Գեղ բուով խոստացանք հաղորդել մեր ընթերցողաց :

Քրիստոնեայ ճորտք :

Լրացաւ Յաւիտենականի նշանակած րոպէն : Երրորդ ամիսացոյ սպառ զարկեց վերջին ժամը. լսեց և հնազանդեց նորա ձայնին հոգաբարձու վեհապետաց խաչատուր աղան Յովակիմեան Լազարեանց, որ հանդիսաւոր կայաց իւր կեանքի ամեն մի օր արժանապիշատակ բարեզորութիւններով և մեծամեծ սխալողութիւններով և որոյ յիշատակը կ'աւանդուի որդւոց յորդիս : Ենչած է ահա նա այս ցորտ տապանի մէջ. մի քանի րոպէից յետոյ սորա հրեշտակային հոգին կ'ուզուի որդեպի իւր սիրելի և սեպական հայրենիքը, ժառանգել յաւիտենական երջանկութիւնը, որ պատրաստուած է Տիրոջ ընտրեալներին միայն : Սիրելի մեռելոց, որք ի Տէր նշնեցին այժմիկ վաղապետի : Յով. Յայտ :

Բարեպաշտ կեանք, առարինի վախճան. վասնզի նորա օրերը անցանումէին բարեղործութեան մէջ, ազգի

անկարգութեանց և տեղի պիտի տայ, մանաւանդ որ առանց կեղծութիւն անալու, առանց մեր տուած հրահանգին յօդուածոց ու շարքութիւն ընելու կը զործէ նա, և իւր փառասիրութեան սին փափաքը յագեցնելու զբաղած է, փութաց յետագայ յորդորանաց վերջին նամակը ևս գրելով յուղղութիւն հրաւիրել զնա :

Գիւան քաղաքական Գահիրէ, 16—28 ժողովոյ, համար 96 Օգոստոս 1872 :

Արժա. Կարապետ վարդապետ Բաղրատունի, յԱյգեթաւաղիս :

Սուրբ թէ՛ հեռագրիւնից և թէ՛ երեք նամակիւնի միատեղ ստացայ. և որոց ամբողջ պարունակութիւնը կարապետ աղայ Յակոբեանի դէմ բողոքներ են : Եւ անաւոր կէտ մը սակայն վշտացոյց զիս և զոր կը յիշեցնեմ նաև Ձեր սիրելութեան, յուսալով որ մեր այս արդարացի դիտողութիւնը իւր կրօնի ճշմարիտ պաշտօնեայ նկատողութեան կառնակի սիրելի, մենք կրօնականքս իւր հովիւներ կը պարտաւորինք սուրբ Աւետարանի բարոյականը քարոզել. այս է սէր, խաղաղութիւն, նաև անյուշաչարութիւն. տեւեմնք սակայն եթէ ձեր նամակները այս նուիրական պարտքերուդ լուրը կը հաղորդեն մեզ : Յաւ ի սիրտ կըսեմ թէ ոչ : Եթէ իրաւացի իսկ ըլլան Կարապետ աղայ Յակոբեանի դէմ զրածնիդ, միթէ այդ կերպով վարուիլ օրինակը կը գտնէք. կառավարութեան կրմանէք զնա, և հպտուցում կը պահանջէք. ըսի է աւելի Մովսիսական օրինաց կը հետևիք, քան Փրկչին մերոյ քարոզած ճշմարիտ բարոյականին : Յիշեցէք որ դուք էք միայն դատաւարը ձեր ոտնիս և ոչ ազգը կամ ազգէս ուրիշ անհասներ : Ղուք ձեր ստորագրութեամբը՝ ձեր անձին դէմ նախատիք կամ սպառ

դաւանքերի աւետարանական հոգեով կը թուլեան, և մարանի և եկեղեցիների ու պաշտօնագրութեան հոգեով վասն բարեհաղթութեան և բարոյական վերանորոգութեան և ազգի և հայրենեայ :

Սուրբ Հայ մանկտի, որ և իցէ կրկնականարի տակ բնակուած, Ուստատան, Պարսկատան, Հնդկատան, Տաճկատան, Տանապարհի տարածութեամբ և դժուարութեամբ չեն արգելուում, դիմումն դատ դատ օրհնեալ Ուստատանի ծոցում հիմնած Լազարեան ազգապարձանք ձեռնարանը, նորա հայրախոսած յարկի տակ կրկին մկրտուածն նորա գիտութեան սուրբ աւագանում, զատարարակիւմն Ստուածածանութեան մէջ իբրև մարդ քաղաքացի, պիտանի անդամ եկեղեցւոց և հասարակութեան, դարձ են տունում գէպի իւրեանց հայրենիքը երախտագէտ և սիրալիր սրտով, նուիրական պաշտելով մինչև ի մահ իւրեանց ամենասիրելեալ խաղաղարի սուրբ անունը : Բարեպաշտ հանգուցեալ խաչատուր աղան Վրիտտոսի կեանքին աշակերտեց, նորա սուրբ ձայնին ունեղորեց : « Թո՛ղ սուք մանկուոյք, և « մի ազգելուք զդոսա գալ առ իս, զի այդպիսեաց է « արքայութիւն երկնից » :

Երախտագիտութիւնը արձանագրուում, զգայուն օրտի խորում պանծալի ննջեցից սուրբ անունը. արտասուէք, որ ցողումն երախտաշարժ հոգեով վեհապետաց հանգուցիլոյ տապանը, վկայ են այն անմոռանալի յիշատակի խորին զգացումներին, շնորհապարտ որդին Հայաստանի դրոշմով կրծքի վերայ այս աստուածեղծ մարդոց անմահ յիշատակը. ամենքը միանային և միահոյի վկայուան, թէ չէին յառաջ այսպէս, որդէս այժմ են վեհապետաց Լազարեանց շնորհաբախտութեամբը :

Հայաստան խոստովանում յայտնապէս, թէ երբ անգոթ թշնամին կուրպոնց իւր թագը արքայական, իւր քաղաքականութիւն և երկիր, Տեսչութիւնը իբրև միակ ինամսուծ և սիրելի իւր դառն ցաւին, պաշտպան իւր անարգը ազգի հանապազօրը գործեան, յարուցեց յատկապէս անմահածնուող Լազարեանց տոհմը, որ ահա աւելի քան զկէս դար խնամուած և կրկնամէ միշտ և յաւիտեան նորա դաւանները, ծառ պաշարի աննեղ շոյս անկող Աստուծուն :

Հայաստան գրկիցեաց իւր նախկին փառքից, բոյց չիտացաւ իւր նախկին բնաւորութիւնը մարտ և աւարտ. նա ունի ազգի առաջ, որպէս կենդանի պատկեր, սուրբ Վարդան և նորա սուրբ Նահատակը, որոյ Հայոց եկեղեցին տարի ցտարի մատուցանէ ընդհանրապէս երախտագիտութեան և մեծարանքի պարտքը, և որոյ պաշտումէ որպէս եզակի փրկիչ և պաշտպան իւր նախնեղ սրբութեան : Հայաստան շոյս կարգում անմոռաց կըզատէ երախտագիտութեան մատենում հոգաւար և փառաւոր անունները իւր բարեբար Լազարեան տոհմի. զի եթէ Վարդանեանք իւրեանց արիւնով փրկիցին եկեղեցին, հետեւապէս և ազգ և հաւատ, իսկ վեհապետ Լազարեանց պայծառախոյլ ձեռնարանի դիտու

նայիք եղաւ ըսելով, ձեր հօտէն միայն պատուիլը կը պահանջէք և կառավարութեան ատենաներու առջև դատուիլը նախապատիւ կըզատէք. և միթէ այս էք ձեր պարտքը : Եթէ արդարև ստոյգ իսկ ըլլան ձեր գլխուն դիտուած նախատիքները, ինչո՞ւ ուղղակի մեղ չիտութեայի իմացնել ինչո՞ւ առանց կեղծութիւն իմացնելու ձեր զայրոյթը յագեցնելու համար կառավարութեան միջապատութիւնը և պաշտպանութիւնը խնդրեցիք : Ղով կը ներկայացնէք հոգ, ոչ սպառնէ զիս. և միթէ ձեզի եղած նախատիքը նաև ինձ չ'վերաբերիր, ինչո՞ւ ուրեմն աւարտեցիք մեք կողմն դատաւար կանգնել և մեր սկիբուներ արատաւորել. չէ՞ որ այս կերպ վարմունքները աւելի խոտովութեանց և յուղմանց պատճառ կը ըլլան և առարինի սրտերը կը վիրաւորեն : Ձեմ տարակուսիր թէ մինչ ցարդ զայրոյթնիդ մեղմանալով՝ հարկաւ ձեր նուիրական պարտքը յիշած էք. վասնորոյ կը յիշուի իմացնել ձեզ թէ ամեն նախապիք և սպառնալիք, եթէ իւրապէս եղած են, մեղ կը վերաբերին՝ քանի որ զմեզ կը ներկայացնէք տեղը. և որովհետև Յակոբեան Կարապետ աղան ալ ձեզի դէմ բողոքած է իւր խոտովար և այն, վտուցեց քամ առաջ հոս գալ, որպէսզի պարտ ու պատշաճ քննութիւնը ըլլայ օրինակը կերպով և արդարութիւնը երևան ելլէ : Այս մասին ձեր դատախաղին ևս գրուած է որ աճապարէ ներկայանալ ժողովոյս, և իւր իրաւունքները, եթէ անի, յայտնէ :

Ղովեք արդէն որ թագերու կամ գաւառներու մէջ եթէ այս տեպակ խոտովութիւններ ծագին, ըստ օրինի թէ՛ դատախաղն և թէ՛ դատի ներքև գտնուողն ի կեղծրոն կը զիմեն կամ կը հրաւիրուին. որպէսզի կեղծրոնական Վարդութիւնը արդարութեամբ դատելով, դատապարտելոց պարտ ու պատշաճ պատիժը տնօրինէ. վասն որոյ և սքս անգամ նոյն հրաւիրը կը կարգայ նաև ձեր

Թեան և իմաստութեան շնորհով՝ փառաւորութեան և կը փառաւորվին նորս օր քան զօր՝ հանդիսանալով ներկայ յուսմ ևս առաւել ապագայում :

Որդին Հայաստանի լուսաւորութեան և բարոյագիտութեան առաքինի հարկը , չէ՛ կարծում վճարել առաքինու վարձը . բանդի դարձարկով նորս յիշատակը պատկերելով և անմահ արձաններով՝ կատարումէ իւր բարոյական պարտաւորութիւնը դէպի առաքինին :

Առաքինու մահը վիպերովէ հաստատ նորս անմահութեան և այն երանութեան , որ պիտոյ է ժառանգէ նա յաւիտենական թագաւորութեան մէջ :

Կատարեալ է մարդ և անթերի , եթէ զարգացած և կրթված է աւետարանական գիտութեան մէջ . անկատար է մարդ և թերի , եթէ չունի պայն , և եւրի ամենայն ուսմանք . զի աւետարանական գիտութիւնն միայն զաստարակով հողինորոնել անցաւոր աշխարհում , կեանք անմահ անանց աշխարհում :

Վեհազն բարերարն իւր քննոյ ժամկութիւնից զարգացած և կրթված աւետարանական սուրբ Հոգւով , երբէք չհեռացաւ նորանից իւր բոլոր կեանքի մէջ մի վայրկեան անգամ : Նա շարունակեց իսկապէս այն շուրջը , որ նորան գծագրած էր իսկզբանէ . ահա սորա համար է , որ նորս կեանքի ամեն մի վայրկեանը լցուած է աստուածային բարեգործութիւններով : Վերանի մեռելոց , որք է Տէր ննջեցին այժմիկ վաղվապակի :

Վկայի ձեռք վեհազնեայ ամենապատուելի տիկին և անմահապատուելի դստերը հանդուցեալ բարերարի վեհազն խաչատրոյ Լազարեանց , որ քանի մի վայրկեան ինչ յառաջ Չի քննոյ ընտանեկան զրկումը միտիմարվէր նայիլով Չի վերայ՝ իրեն իւր հրեշտականման սիրելին , ի վերայ , ահա սա վերացաւ ձեռքից հանապաղ . սորա սուրբ հոգին թաւ դէպի ի խաղաղութեան բնակարանը՝ որ պիտոյ է հանգստանայ յաւիտեան : Վուր չէք միայն ողորմ այսորեան տխուր կորուստը , ձեր անկեղծ արտմտութիւնը վշտացնում է Հայաստանի բարեպաշտութեան որդիքը , որ ճանաչումէին ձեր ազնիւ և մեծազոր ամուսին և ծնողայ նախատիպը . նորս անկեղծ և առատ արտասուէք թախտման այսօր նորս սուրբ տապանի վերայ . բայց այս աշխարհքը առաքինու համար միայն առաքելից բարեգործութեան . նորս վարձատրութիւնն է յաւիտենական աշխարհքում , որի ամենակարող թագաւորը հրեշտակեց այսօր իւր հաւատարմի՝ ծառայն խաչատրու արձան , որ վարձատրէ նորան այն երջանկութիւնով , զոր ակն ո՛չ ետես , և ունին ո՛չ լուս , և ի վերտ մարդոյ ո՛չ անկաւ , պատրաստեալ Աստուած սիրելից իւրոց : Այս Աստուածային բառերը ապարկնէ և միտիմարէ ձեր բարեպաշտ հոգին և սիրտը :

Ո՛վ Աստուած իմ , յսիր մեր շնորհաւոր և արդար ինկրը , որ իրեն խոնկ անուշահոտ մատուցանեմք քեզ այս սրբանուէր և պատկուելի սեղանիդ առաջ . բայց մեր բարերարի առաջին երկնային քաղաքիդ դուռը . պարզեւէր նորան քո երկնային և անսպառ ողորմութիւնը , տարածեր նորանում քո անվախճան ուրախութիւնդ թո՛ղ անձրել նորս վերայ Աստուածութեանդ աննուաղ :

սիրելութեան կեդրոնական Վարչութեան Քաղաքական Թողովը :

ՄԵՆՈՐՈՎ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Կարապետ վարդապետ՝ փոխանակ Քաղաքական Թողովոյ յորդորանայ անաւով ի կեդրոն գլխելու , իւր համամիտները կրկին ՚ի ժողով կըհրաւիրէ և վերայգրեալ նամակը ըստ իւր քմայ մեկնելով՝ խոնկութիւնը ընդհանրացնելու համար ամեն ձեռք կըթափէ . և որպէսզի ուրիշ յատակագիծ մը պատրաստելու համար ժամանակ ունենայ , ՚ի Պահիրէ ելլելու պատրաստ ըլլալը կը յայտնէ իմացնելով սակայն , որ ժողովուրդը զիշեր ցերեկ չըջապատած է զինքը և իւր ճամբորդութիւնը կարգելու : Աւելի հետաքրքրական իւր սոյն նամակն է , որով սպասնալիքներ կընէ գերս . Միսրով սրբազանի , եթէ զինքը չհրաւիրէ ՚ի Պահիրէ իւր համամիտներուն ձեռքէն աղաւտելով : Վասնորոյ Քաղաքական Թողովս ստիպուեցաւ զրել Աղէքսանդրոյ վտեմա . Մուհամմեդին , որ Կարապետ վարդապետի ՚ի Պահիրէ ելլելու առթիւ՝ եթէ զինքը արգիլուներ ըլլան , իւր ճանապարհորդութիւնը զիւրացնէ : Կարապետ վարդապետ այս ամեն տղայամտութիւնները կըբանեցնէ յաջողութեան յուսով . այլ երբ իւր խաղալս քաղաքականութեան մօտալուտ վախճանը կընշմարէ , Աղէքսանդրոյ առաջնորդարանի մէջ իւր ներկայութեամբ և զիտակցութեամբ կըծափուխութեան անտեղի դաշնադրեր պատրաստել կուտայ , իբր սպանալիք կեդրոնիս . բայց վերջապէս ամեն իւր յոյսերը փնջան , երբ տեսաւ նա որ կըծափուխութեան վերջին փորձն ալ չաօգուտ եղաւ և աւելի ծանր սպաստանաւորութիւն մը հրաւիրեց իւր վրայ . վասնորոյ երկուարթի ՚ի Պահիրէ պիտի ելնեմ գրեւով , երբեք թի Աւարիական շղջնաւով գաղտադողի խոյս տուաւ :

արդիւրը միտիմարութեան . վասնոր նա էր հայր իւր սիրելի ազգի , պաշտպան և հոգաբարձու քո սուրբ եկեղեցոյ և հաւատոյ , բարերար և խնամամու անտէրունջ անթիւ ազգասնեքի :

Քրիստոնեայ եղբորք , հանդուցեալ բարերարը ազգիս՝ սպասումէ մեր վերջին յուզարկաւորութեան . բաննայնք սորա սուրբ նշխարքը մեր ուսերու վերայ , տանենք , անանդենք հողին , ասիւով , օրհնաւ է ել քո , Ա՛յրք Աստուծոյ , օրհնեալ է մուտ քո , Ա՛յրք Աստուծոյ՝ , այժմ և յաւիտեան :

ԵՐԵՄԻԱ ՍԱՀՄԱԿԵԱՆՅ

Սանկզպատիրուրք :

Անաւայիկ մեր լուսանօգի տէր Պօղոս Ս . Առաջնորդին ինքնագիր կտակին օրինակը , որուն տնօրէնութիւնները համառօտիս յայտնեցինք Արշալուսոյ նախընթաց քուով :

Այսու յօժարակամ գրութեամբ իմով յայտ առնեմ ամենեցուն , զի ետու ազգային հիւանդանոցի քաղաքիս Չի փութիոյ՝ յոր կառուցեալ է յանուն սրբոյ Լուսաւորչի , 500 հատ , որ է հինգ հարիւր հատ Օսմանեան լիւր ոսկի , և զերկուս տուփս՝ որոց մին փնէլի ոսկի և միւսն սոսկ ոսկի և զինք սոյն տիոցս փանդամայն արժէ ըստ կարծեաց ոսկերչաց ոմանց՝ իբրև 3000 զուրուշ , որ է երեք հազար զուրուշ . և ՚ի վերայ սոյն գրամոց կարգեցի կացուցի միւթեվէլի և հոգաբարձու զհարազատ եղբայր իմ Մարտիրոս աղա Ռադիթեանց , և զերկուս որդիս նորս զՏիրան Էֆենտին և զՄիւսի Օարէհ , որպէսզի այսու հինգ հարիւր ոսկեւով լիւր և զնոյք իբրև երեք հազարաց զուրուշի յիշեալ երկուց տիոցս՝ զնոյ անուցուցն միւլք շէնք մի յանուն ազգային հիւանդանոցի քաղաքիս և ամի ամի զվարձս նոյն միւլք շէնքին՝ յանձնեցն ազգային միւթեվէլի հիւանդանոցի որ մատակարարեցէ ՚ի պէտս հիւանդաց և անկեղց անդ ողորմ ինձանց , և տացն արձանագրել զայս կտակագիրս և զայն միւլք շէնքս յանուն հիւանդանոցի քաղաքիս յազգային տումարի , և մի վաճառեցի յոր և է ժամանակի , ՚ի պէտս ազգային իւրաց և այլ և այլ պատճառաց : Օայս կտակ ՚ի կենդանութեան իմում արարեալ նուիրեցի յանուն Աստուծոյ բարձրելոյ . և պատուիբեմ միւթեվէլի կորդեալ երկն անձանց ազգայաց իմոց և պարտաւորեմ զնոսա զի յետ մահուան իմոյ՝ ըստ գրելոցս ՚ի գործիցն զկտակս և զկտակեալս , և զզոյշ լիցին իւրճի մօք՝ որ և իցէ պատճառօք շնորհիլ բնաւ ՚ի կտակէս : Եւ որչափ կենդանի են , միւթեվէլի յիշեալ անձինք երեքեանն են : Այլ երբ և կամեցին յետ կարգադրելոյ զգրեալքս՝ յանձնեցն ազգային հոգաբարձուաց , որք և ըստ նշանակելոյ իմոյ խնամ տարցն , և մի վաճառեցն և մի մնասեցն : Եւ մի

Աղէքսանդրիայն , առանց ազգային կառուածոյ հաշիւները տալու , որու յանձնուած էին կեդրոնէս . և այժմ չգիտեմք թէ որչափ է իւր հետ տարած գումարը , թէ՛ պէտ կըհաստատեն երկուհարիւր ոսկիի չափ ըլլալ :

Քաղաքական Թողովս Կարապետ վարդապետի փախտեան ըտր հեռագրով առնելէն ետքը՝ իւր կողմանէ բանիբուն քննիչ մը զրկեց յԱղէքսանդրիոս , որպէսզի արդի գործակատար արժա . տէր Միսրիշ քահանայի հետ նոյնին արարք ըստ օրինի քննելով , արդիւնքը ժողովոյս ներկայացնէ : Քննիչը իրեն յանձնուած պաշտօնը կատարելով պարտուպատշաճ տեղեկագիրը կըպատրաստէ , որուն պարունակութիւնը յետագայ եօթն յօդուածներով կըբովանդակեմք :

1. Թէ Կարապետ վարդապետ Քաղաքական Սղէքսանդրիոյ մէջ տեղի ունեցած գժտութեան պատճառ եղած է կուսակցութիւն մը կազմելու առթիւ :

2. Կարապետ վարդապետ չէ՛ ուզեր ականջ կախել ապօրինաւոր քուէարկութեան դէմ եղած օրինաւոր դիտողութեանց :

3. Սուրբ Եկեղեցոյ բեմէն սուրբ Պատարագի ատեն պատուարժան ազգայնոյ դէմ անլուր թշնամանք և նախատինքներ տեղաւով՝ կիրքերը աւելի յուրած է :

4. Աղէքսանդրիոյ առաջնորդարանի մէջ կըծափուխութեան քարոզ կարգաւով՝ Կարապետ վարդապետն դաշնադրեր ստորագրել կուտայ իւր կուսակցաց , իբր սպանալիք կեդրոնիս , և իւր փախտեան երկրորդ օրը իւր պատրաստած դաշնադրերը կըըզլին , և միւսնոյն ատեն փախտեան պատրաստութիւնները ընկնէն ետքը՝ Աղէքսանդրիոյ Մուհամմեդին թագրիւով մը կըմացնէ թէ՛ Պահիրէ ելնելու առթիւ հինգ ազգայնոց յանձնած է ազգային ամեն գործոց հսկողութիւնը , և Մուսրիս

հանցն ՚ի ձեռաց ՚ի պէտս այլոց ազգային պիտոյից : Եւ որք հակառակ վարեցին՝ զրեւոյս՝ պարտական լիցին ահեղ դատաստանին Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ մերոյ , և որք ըստ զոյս կատարեցնէ՛ ժառանգեցն զօրհնութիւնս Տեառն Աստուծոյ , և ընկալցին զանհուն ողորմութիւն ամենաբարեւոր բարեարութեան նորս : Եւ զի վերջը լցուցաւ ետու քսան լիւր ոսկի բոլոր քահանայից համար մշանջնաւոր լինելոյ : Եւ զքսան լիւր ոսկի ևս Աղէքսանդրաց ընկերութեան ՚ի խնամել զաղքատ հիւանդս : Եւ ահա ՚ի հաստատութիւն զրեւոյս յայտնի կտակագրի վասն ամենայն կտակաց իմոց նուիրելոց ՚ի փառս Աստուծոյ՝ կենդանոյ ստորագրեալ կնքեմ :

Ի 4 Կնուիսի 1872 ՚ի Չի փութիոյ :

Առաջնորդարան մեր :

Պօղոս արքեպիսկոպոս Չի փութիոյ :

ՈՍՏԱՆԻԿ ԵՒ ՄԱՐԳԱՐԵՍԻՑ

Քանի մը շարթ յառաջ՝ Փարիզի առաջին կարգի համալսարանի մը մէջ լուր քանի մը տարիէ ՚ի վերանդուլ շանիւք կաշխատի , Պ . Ոստանիկ տէր Մարգարեանց վանքից Հայ երիտասարդը երկրագործական ճարտարագետի տիտղոսը ընկալաւ 200ի չափ աշակերտներէ յառաջ անցնելով հանդիսաւոր հարցաքննութեան մը մէջ :

Յիշեալ հայկազուն երիտասարդին ուսմանց այսպիսի յաջող աւարտումը և վերջին մրցանաց մէջ իւր ակոյաններուն վերայ տարած փառաւոր յաղթութիւնը՝ անտարակոյս իւր հայկական մեծ հանճարոյն ապացոյց մըն է , զոր զաղիական տէրութիւնը իրաւամբ փութացաւ վարձատրել ոսկեղեն նշան և ուսմանց առաջին մրցանակը շնորհելով անոր :

Ուրախ սրտիւ կըշնորհաւորեմք զպարոն Ոստանիկը իւր պանծալի յառաջադիմութեանը վերայ , որուն պատճառաւ Հայոց ազգը գոգնութեամբ կը յիշուի Պաղղոյ և Անդրոյ զլիսաւոր լրագրաց մէջ ՚ի միտիմարութիւն սըտի բոլոր ազգասիրաց :

ԱՌԱՋՆՈՐԳԱԿԱՆ ԽՆԴԻՐ

Երէկ ազգային երեսփոխանական ընդհանուր մտնող գումարուեցաւ Առաջնորդարանն քաղաքիս ընդ նախադասութեամբ գերա . տէր Պիտրոյ ծայրանակեայ Պոխանորդի պաշտօնը կըլարէ , և աստեալ պետութեամբ մեծա . Միկրիշ աղայի Երկրեանց : Այս գումարման նպատակն էր առաջնորդական քանի մը ընտրելիներ պատաստել ազգին մէջ գտնուած բանիբուն եպիսկոպոսներէն և ծայրագոյն վարդապետներէն և անոնց ցանկը հրատարակել , որպէսզի

խափ ստորագրութիւնը կըբնէ խաղալութեամբ , զոր կառավարութիւնը իրաւամբ կըմերժէ :

5. Կառուածական հաշիւները ըստ իւր քմայ պատրաստելով գործակատար կարգած հինգ անձերուն կուտայ , զորս քննիչը կըմերժէ ընդունել մինչ ցվերազարձ Կարապետ վարդապետի , որպէսզի օրինաւոր հաշիւ պահանջուի և իւր հետ տարած գումարին՝ որչափ ըլլալ ստուգուի :

6. Իբր Մուրախիսա՝ քանէն աւելի անդորրազրեր կըստորագրէ , ազգային կնքով կըկնքէ և իւր հաւատան ըմ կուսակիցներէն մէկուն կը յանձնէ որ իւր խոյս տալէն ետք ազգային եկամուտները զաղտնարար հաւաքէ :

7. Ազգային արձանագրութեան տեսրակին մէջ ուղղածները գրեթէն ետք՝ ուրիշ կարեւոր թույլութիւն հետ կանհետացնէ , և այսօր ուր ըլլալը անյայտ է :

Ահա Կարապետ վարդապետի՝ Աղէքսանդրիոյ մէջ յարուցած գժտութեանց և երկպառակութեանց տեղեկագիրը . զոր Քաղաքական Թողովս կեդրոնական վարչութեան սրբազան նախագահին մատուցանելով , կընկողնէ որ բարեհաճի վերադարձնել զնա ՚ի Պահիրէ , որպէսզի վիճակիս մէջ նոյնին ապօրինաւոր արարքները նուս ՚ի ներկայութեան իւրում կրկին քննուին , կարուածական հաշիւները պահանջուին , նոյնին ազգիս հասուցած մնասները յայտնուին , հետ տարած գումարը վերադարձուի , որպէսզի ուրիշ կըծանական մի ալ չյանդրի Կարապետ վարդապետի եպերելի քաղաքականութեան հետեւելով՝ վիճակիս անդորրութիւնը վրդովել , և վախճելով զինքը պատասխանատուութեանէ ազատ կարծել :

Պահիրէ , 16—28 Սեպտեմբեր 1872 :

Կրկնտեսիկ ստորագրութիւնք անդամոց Քաղաքական Թողովոյն Երկրեանց :

անոնց մէջէն որոնք արժանաւոր կը համարուի, իրար
րի վիճակին Առաջնորդ ընտրուի, հաւանութեամբ ժո-
ղովրդեան մեծագոյն մասին :

Ինչ ինչ վիճարանութիւններէ ետեւ, ատենապետ
էֆէնտին առաջարկութեամբը և ներկայ գտնուող
երեսփոխանաց մեծագոյն մասին հաւանութեամբը
մասնաժողով մի կարգուեցաւ, բաղկացեալ ՚ի չորս
եկեղեցականաց և ՚ի չորս աշխարհականաց, և այս
մասնաժողովը յանձնուեցաւ յիշեալ ընտրելիները
պատրաստել և անոնց ցանկը՝ յայտարարով մի, մատու-
ցանել երեսփոխանական ժողովոյն :

Արտեսներ և կը լսեմք թէ բանիրուն ժողովրդեան
մեծ մասը կը փափարի որ Արարչեան գերա. խորէն
եպիսկոպոսը ընտրուի յԱռաջնորդ վիճակիս Չմիւռ-
նիոյ : Այս փափարը մեք ես խիստ օրինաւոր կը հա-
մարեմք. վասնզի խորէն եպիսկոպոսը՝ ինչպէս յայտ-
նի է շատերուն, ուսումնական, Աստուածաբան,
լեզուագէտ և խոհական անձ մըն է. ուստի քաջայոյս
եմք թէ այս պատուական յատկութիւններով, և իւր
կենցաղային օրինակով, համակրական բնաւորութեամբ,
ճարտար քարոզութեամբը և մանաւանդ վարժարա-
նաց բարեկարգութեան և յատկաբանութեան նկատ-
մամբ ունեցած օրինաւոր հմտութիւններով քաղաքիս
Հայոց պատիւը և համարումը պիտի աւելցնէ, և կա-
րող պիտի լինի թեթեւեղ մեր արդիական սաստիկ
ցաւը, զոր կը զգամք մեր լուսահոյի հազուադիւրս
Առաջնորդին մահուանը վերայ :

Արդ՝ ըստ մեր կարծեաց, այսպիսի արժանաւոր
հոգեւոր Հովուի մը կարտուութիւն ունի Ամբիւնացի
Հայ ժողովուրդը, որպէսզի լուսաւորեալ դարուս պա-
հանջմանցը և իւր սրտին բաղձանայը համեմատ զար-
գացեալ տեսնէ Միտրոպեան և Հոսիսիմանց հոյա-
կապ վարժարանները, և կարող լինի հաստատուն
պահել ազգային յարգը և համարումը՝ զոր ստացած
եմք սատ օտար ազգաց առջև, հանդուցեալ տէր Աօ-
ղոս Ս. Արքեպիսկոպոսին առաջնորդութեան օրովը :

ՔԱՆԱՎԱՆ ԽՈՒՄՆԻ

Զմիւռներս, 7 Հոկտեմբերի :

Վսեմափայլ Սասրի փաշան, որ կայսերական հը-
րովարտակաւ Այտընի նահանգիս կուսակալ կարգուած
է, այսօր հասաւ ՚ի Ա. Պոլսոյ :

Նորին Վսեմութիւնը, որ նահանգիս կուսակա-
լութեան բարձր պաշտօնը արդէն վարած է, թէև
քիչ ժամանակ, Նորին Վսեմութիւնը կը սեմք, ար-
դէն ծանուցեալ է քաղաքիս հասարակութեան, ուստի
աւելորդ կը համարեմք անոր խոհական մարդա-
սիրութիւնը, կենցաղագէտ գործունէութիւնը և լեզ-
ուագիտութիւնը գովութեամբ յիշել ստանալ :

Մեր նախորդ վախ վսեմ. Ամբիւն փաշան, որ խիստ
պատուաւոր և քաղցր յիշատակ մի կը թողու այս երե-
կոյ պիտի մեկնի ՚ի Պոլսոյ վերադառնալու :

Անցեալ շաբթու Քրքաղաքի Զորեպանը Մա-
նիսայի մօտ աւազակներու հանդիպելով, անոնցմէ
կողոպտուեցաւ և իւր քովը ունեցած 3000 լիոսայի
չափ դրամը, որ իրարմի վաճառականաց կը վերաբե-
րէր, յիշեալ եղեռնագործ անձանց ձեռքը անցաւ :
Այս ձախորդ լուրը առնելուն պէս, վսեմա. Ամբիւն
փաշան ընկերութեամբ բաշական զօրաց, փութացաւ
՚ի Մանիսա երթալու, և յաջողեցաւ աւազակներէն
երեքը բռնել տալ : Տարակոյս չկայ թէ շատ չանցած
միւս աւազակներն ևս ձեռք պիտի անցնին :

Բարձրապատիւ Արքեպիսկոպոս Մեծ—Պատրիարք, որ
ամենայն իրուսաց կայսեր եղբայրն է, անցեալ շա-
բաթ օրը հասաւ ՚ի քաղաքս Վլատիմիր կոչուած իրու-
սաց շոգենաւով և հետեւեալ օրը շարունակեց իւր
ճանապարհորդութիւնը յԱսորիս երթալու :

Նորին կայսերական Բարձրութիւնը մեծ պատուով
ընդունուեցաւ ՚ի Ա. Պոլսոյ ՚ի վեհա. Սուլթանէն, որ
հաճեցաւ Օսմանիէ կարգին առաջին աստիճանի
ակնակուռ շքանշանը շնորհելու անոր, այլև. երկու
արարայի նժոյգ ընծայեց յիշեալ Մեծ—Պատրիարքի :

Օսմանեան մեծագոր կայսրը՝ յայտարարեց իւր բա-
րեկամական անկեղծ զգացմանց, հաճեցաւ ոսկեղծ
փառաւոր կառք մի ընծայ յարարելու ամենայն իրու-
սաց վեհա. կայսեր :

Կը լսեմք թէ Բաղթարեան մեծաշուք Տիրան է.
Ֆէնտին՝ որ պատերազմի պաշտօնատան մէջ խորհրդոյ
քարտուղար և թարգման կարգուած էր, նահանգիս
կուսակալութեան մուսուլմանի պաշտօնիւ շուտով պիտի

վերադառնայ ՚ի քաղաքս :

Արամեան վսեմա. Արքա՛սամ—Պէյը, որ Ա-
րքիպոսի բարձրա. խորհրդին առաջին թարգման և
վսեմա. Արքա՛սամ փաշային աներձագն է, Պալայի
բարձր աստիճանաւ և Մէճիսիէ կարգին առաջին
աստիճանի շքանշանաւ պատուեցաւ :

Պալեան վսեմա. Յակոբ—Պէյը, որ նախորդ մեծ
Եպարդոս Մահմուտ Մեթիմ փաշային օրովը արքու-
նի ճարտարապետի պաշտօնէն հանուած էր, անցեալ
ամսոյ 23ին ՚ի կայսերական պալատը հրաւիրուելով,
պատիւ ունեցաւ, ընկերութեամբ իւր եղբորը՝ ար-
քունի ճարտարապետ վսեմա. Սարգիս—Պէյին, ներ-
կայանալու օգոստա. Սուլթանին, յորմէ վեհաձն
մարդասիրութեամբ ընդունուելով վերահաստատու-
ցաւ իւր բարձր պաշտօնին մէջ ՚ի մեծ ուրախութիւն
սրբի բոլոր Հայոց :

Արքունի թէ վսեմա. Գորիգոր Օտեան էֆէնտին՝
արտաքին գործոց պաշտօնական խորհրդական միւշ-
թէշար) պիտի կարգուի, փոխանակ Գարաթօտորի է-
ֆէնտինին, որուն պիտի յանձնուի եղեր հրապարա-
կական շինուածոց պաշտօնատան միւշթէշարութիւնը :

Վէննայի օսմանեան դեսպան վսեմա. Սալիլ
Շէրիֆ փաշան, որ արտաքին գործոց պաշտօնայ
կարգուած է, անցեալ շաբթու հասաւ ՚ի Ա. Պոլսոյ
և պատիւ ունեցաւ օգոստա. Սուլթանին ներկայա-
նալու յորմէ բազում մարդասիրութեամբ ընդուն-
ուեցաւ և Օսմանիէ կարգին առաջին աստիճանի շքա-
նշանաւ պատուեցաւ :

Վսեմաշուք Ալի իբրաւ—Պէյը, որ վսեմա՛ն
եալ Մեծ—Եպարդոս Ալի փաշային որդին է, ար-
տաքին գործոց պաշտօնատան Մէթիմի կարգեցաւ :

Գաղղոյ դեսպան վսեմա. մօսի տը ղ) օկէ փա-
րիզէն վերադառնալով՝ պատիւ ունեցաւ վեհափառ
Սուլթանին ներկայանալու. յորմէ մարդասիրական
մեծարանք և պատուով ընդունեցաւ : Այս բարեպա-
տեհ առթիւ, Նորին կայսերական Վեհափառութիւ-
նը Օսմանիէ կարգին առաջին աստիճանի շքանշանը
իւր ձեռքը, մատոյց յիշեալ դեսպանին :

Նորին Վեհափառութիւնը հաճե-
ցաւ պատուել Ասորիոյ կայսերութեան առաջին պաշ-
տօնեայ Անարասի կոմսը, յուզարկելով անոր Մէ-
ճիսիէ կարգին առաջին աստիճանի շքանշանը :

Հայազգի վսեմ. Մեթիմ խանը, որ թեհրանի
մէջ Նիզամ—Իւլ—Միլիթ կոչուած բարձր պաշտօնը
կը վարէ, օգոստափառ Ահմէտ ակնակուռ կենդա-
նայիւր ընկալաւ ՚ի Ա. Վեհափառութեան, յայտարարեց
իւր արքայական բարձր գոհուակութեան :

Օգոստափառ Այտ—Իւլ—Աղիլ մեծագոր կայսեր
ծննդեան տարեգարձին սօնախմբութիւնը՝ երէկ սո-
վորական հանդիսի և բաղմամբ թնդանօթաց ար-
ձակմամբ կատարուեցաւ :

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

Բամպակին գիները քիչ մը բարձրացան և 850 հակ
մեքենայով մաքրուած բամպակ վաճառեցաւ 505—510
ղուրուշի կենդինարը :

Վֆիօնը կուզի միշտ և գիները երթալով կը
բարձրանան. այս շաբթու 90 կողովի չափ վաճառե-
ցաւ, հասարակ տեսակը՝ 210ի և Գարահիտարի ա-
ֆիօնը 218էն մինչև 220 զուրուշի չէֆին :

Քեօքոյոյան գիւրաձառ և 306էն մինչև 320
ղուրուշի կենդինարը :

Փալամուտին նկատմամբ Անդղիայէն և թրեւտէն
հասած լուրերը շատ յաջող են. ուստի այստեղ ևս
գիները հաստատուն են և 5000 կենդինարի չափ
վաճառեցաւ, մէջանա կոչուած ընտիր տեսակը 127—
130 զուրուշի և հասարակ ապրանքը 109—110ի :

ՏԵՆՈՒՅՈՒՄ

Պարոն կարապետ Յ. Կարիկեան կը փութայ մա-
նուցանել քի այսօրուանէ (Հոկ. 7) սկսեալ՝ ամանեթիի
պաշտօնիս իզմիրին ՚ի Ա. Պոլսոյ պիտի երթայ ամեն
շաբաթ օր եւ Ա. Պոլսոյն իզմիր պիտի գայ ամեն ուր-
բաթ օր : Ուստի ս'ի որ նամակ ամանեթ ունի, պիտը
ե որ տանի ՚ի կիրիտ խանը իւր 35 մաղազան :

LA VELOUTINE.

Ա. Ս. ՎԵՂՈՒՅՈՒՄԻՆ կոչուած բրիճնի փոշին (բոտո-
րա), որուն պատուականութիւնը կատարեալպէս

փորձուած եւ անցուած է շատ տարիներէ ՚ի վեր,
մարքասի կամ պիտիւք անուանեալ տեսակ մի սպի-
տակ հանքով պատրաստուած ըլլալով, մարդոյս մոր-
բոյն վերայ օգտակար ազդեցութիւն կը ընէ : Այս ձեւով
փոշին՝ որ կ'ալուրն (եպիսկոպոս) է եւ գրեթէ ամենեւին
ազդի ջուսնուիր, մարդոյս մարմնոյն բարմութիւն
եւ նետեալար կակիւրիւն մի կուտայ :

Այս պատուական փոշին Փարիզի մէջ Լա Ֆե կոչ-
ուած փողոցը Շ. Փար փամառամիլին քով, իսկ
ուրիշ քաղաքները ամեն փոմատամիլներու եւ Ֆրեմկ
սափրիչներու քով կը գտնուի :

ՀԻՒԱՆԳԻՆ ԲԱՐԵԿԱՍԸ



ԳԵՂԱՅԱՏՔ ՀՈՒՂՈՒԻԻ

ՋԱՍՏԻՆ ՀԻՒԱՆԳՈՒԹԻՒՆԻՔ

Մարդոյս ջղային գրուածեան (սիւնի) շատ յոգնած ըլլալը
ստակալի արտ մըն է և ջիւղեուն ամենափոքրիկ շարժումը կամ զբո-
րանութիւնը մշտապէս է յոյժ. վսեմ զի ուր գտնուելու է անոր դե-
ղը : Մեծի զեղը այս է. քիչ իսկ գինի, զարեւուր, և ոգե-
լից բմեղներ. և աւելի ազէկ կը լայ որ բոլորովին հեռանա ա-
նոնցմէ, և ամենեւին չիսնա. նմանապէս խաճկէ մի խմեր, և անոր
սեղ լեթիւն լեթիւ (չայ) գոհ եղեր : Կարելի եղածին չափ մա-
տոր օդ ձծէ ամեն գիշեր իմ դեղահաստերու երեք կամ չորս հա-
կը լիցէ, շատ միս կեր և համեմունք (սուշ) հեռի կեցիր : Եթէ
այս օգոստակար կանոնները ճշգրտութեամբ ՚ի գործ գնելու ըլլա-
միտք շուտով պիտի հանդուստանայ, մարմնիդ առողջ պիտի ըլլայ և
պիտի մոռնաս թէ ջղաց շարժումն ունեցար :

ԱՆԿԱՐԳՈՒԹԻՒՆԻ ԲԵՐԿԱՍԱՆՑ

Այս գործարանաց վերաբերեալ ամեն հիւանդութեանց մէջ
թէ կը կանգնէ շափէն աւելի ջրալից կը լայ կամ բաւական չէն ըլ-
լար, թէ բարը կամ աւազը երկիւմանց կը հանին կամ թէ ա-
նոնց մեջցաւեր կը գոյանան մեջքին սանապատախանած մասը : Այս
ամեն հիւանդութեանց ժամանակը վսեմը է Հայ օտեի դեղահաստե-
րը ամենու տակալ հրահանգաց համեմատ և անոր սպեղանիովը ջը-
փել երկիւմանց վարի կողմը անկողին մտնելու ժամանակը : Այս
գարմանը ստիպական օգնութիւն մի պիտի մատուցանէ, այնինչ ու-
րիշ գեղերը զար սեղը գործածուած պիտի ըլլան :

ՍԱՐԿԱՐԵՍԻ ԱՌՈՒՆԵՐ

Ար և է դեղ մի չկրնար ստամբար գործութիւնը նորագէտ
աղիկները զայն շուտով ինչպէս այս դեղահաստերը. որոնք անբարե-
խաւանութեան կամ վատմար կերակուելու պատճառաւ բոլոր թեթե-
ւութիւնը կը վսեմեն և կը հասնին ՚ի լեարզն (ֆորմէյէր), որ-
ուն գործողութիւնը կը կարգադրեն. ջիւղեուն սաստիկ ձգման
(սֆուլ) դեպքերու մէջ սրանչէր ներդրութիւն մի ունի և լեարզ
ու ստամբար ամեն անկարգութիւնները միշտ կը բժշկէ :

ԲՈՐԲՈՒՔՈՒՄԻ ԹՈՒՔԱՌՈՒՄԻՅ (արուստ) ՀԱՁ ԵՒ
ՀԱՐՈՒՂԻՍ

Շնչաւորութեան վերաբերեալ գործարանաց հիւանդութիւնը
ամեն արտն աւելի յաճախ կը պատահի և երբեմն աւելի վտան-
գաւոր է : Անոնց գործողութեանց անկարգ ընթացքին աւազները
շանկեր կրնան միշտ կարգադրուել Հայ օտեի հուշակար դեղա-
հաստի միջոցաւ : Անոր շուտով կը գարմանեն արեան ուր և է առ-
ժամանակեայ անզարթութիւնը, կը լեթիւնցնեն խոցած շնչարանե-
րը, կը բարեխաւանեն շնչաւորութեան սաստիկ արտգութիւնը և կա-
րողութիւն կուտան շնչափողին ու թորեուն դիւրութեամբ ու կա-
նոնաորակէս գործընդ : Այս դեղահաստերը՝ իրենց մարդողակ
գործութեամբ կը սրեն արեան ամեն աղտոցութիւններէն, և այս
եղանակաւ կը զօրացնեն գրուածութիւնը (սիւնի) ընդդէմ ձեռակա
սխալի, շնչարգելութեան, և ուրիշ թնդային տկարութեանց :

ՏԱՐԱՅԵՆԵԼ ՄԱՐԿԱՍԻՆ ԲԱՐԿԱՍՅՈՒԹԻՒՆԻՔ

Տարուածեան, թուրութեան և ջղացաւորութեան դեպքերու
մէջ, որոնք որ և է բնական կամ գերբնական շափազանցութեան յա-
ռաչ եկած են, այս դեղահաստից այլալիչ և նորոգիչ ներդրութե-
անց մեծապէս օգտակար է. քանզի մարդու թիւնը կը վերահաս-
տատէ, մարմնին ամեն հիւանդութեամբ կը կանոնաւորէ, ջղային
գրուածութիւնը կը զօրացնէ, հիւանդին միտքը կը յարգարէ և վերա-
պէս առողջութիւնը ձեռք կը բերէ :

Հայ օտեի դեղահաստերը ամենեւն օգտակար դեղերն են հե-
տեւեալ հիւանդութեանց համար :
Շնչարգելութիւն, Յօդացաւորութիւն, Թորացաւորութիւն,
Մակաւային արտ, Տեսաւտեւութիւն, Յար գործային,
Խիթ (սահէ), Ջրորդութիւն, Միզարգելութիւն,
Հարբուցի, Անարարութիւն, Բորբոքումն,
Ծիւրական արտ, Գալուկն, Գալուր ընդերաց,
Թանջ (սիւնի), Բարեխաւան արտ, Անկանոնութիւնը կա-
խոյլ պարանոցի, Բար կամ խիճ միջա- նանց,
Արեւտութիւն, Նոցի, Մորթային հիւանդու-
Լեղի հիւանդութիւնը Գլխացաւորութիւն, Թիւնը,
Փողացաւ : Ափրոյիտեան արտ, Սոցոցութիւն :

Գիտել արժան է որ տակալ հրահանգներ կան ամեն լեղուով
որոցմէ մի հատ կը գտնուի իւրաքանչիւր տուփին մէջ ՚ի սեղե-
կութիւն հիւանդաց, ամեն պարագայից մէջ :

Այս դեղահաստերը, որ կը լինուին Հայ օտեի բժշկին անձա-
կան վերահաստութեամբը, կը վաճառին իւր գործարանը ՚ի Լու-
սան, Օրփօթու կոչուած փողոցը թիւ 533, ՚ի գին 1 և 1 ուկե
չըլնի 2 3/4 և 4 1/2 շըլնի տուփը, ըստ մեծութեան տիպը :

Խմբարկը—տէր լրագրոյս,

Գ. Կապուսի. Պալապարեան :

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՐՇԱՆՈՅՍ ԱՐԱՐԱՏԵԱՆ